



**ԳՈՒՐԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ ՄԱՆԿԱԳԻՐ-ԲԱՆԱՀԱՎԱՔ**  
(նվիրված է Գուրգեն Գաբրիելյանի 90 -ամյակին)

**Կարինե Ղույան  
ՄՄՀ  
Արցախ**

***Անոտացիա:** Գուրգեն Գաբրիելյանը ժամանակակից հայ մանկական բանաստեղծական արվեստի լավագույն ներկայացուցիչներից մեկն է, որն առաջին հերթին հոգեբան-մանկավարժ է. երեխայի հետ խոսում է նրա լեզվով և մանկանը հատուկ պարզությամբ ու բարությամբ: Գաբրիելյան-գրողը գտել է իր ուրույն ոճը, քանի որ լավ էր հասկանում երեխայի ներաշխարհը:*

*Գուրգեն Գաբրիելյանը նաև երգիչ-բանահավաք էր: Նա երևույթ էր մեր գրական աշխարհում, և առանց նրա շատ կողմերով թերի կլիներ հայ մանկագրությունը:*

*Գ. Գաբրիելյանը սուկ գրական մշակ չէր, նա նաև քաղաքական գործիչ էր, խիզախ գործիչ իսկ Արցախյան շարժման տարիներին` առաջին զծի զինվոր:*

*Գ. Գաբրիելյանը` որպես անհատականություն, բարի, իմաստուն, հայրենասեր մի անձնավորություն էր:*

***Բանալի բառեր` Գաբրիելյան-մանկագիր, մանկագրություն, բանահավաք, լրագրող, հոգեբան-մանկավարժ, դարաբաղյան նվագներ, երգահան, բնապատկեր, արցախյան գոյամարտ, ազատություն, հաղթանակ:***

Միջնադարում, ըստ սովորության, բազմակողմանի տաղանդ ունեցող գործիչներին կոչում էին Շնորհալի: Եթե այդ ավանդույթը պահպանվեր, այսօր մենք համարձակորեն **Գուրգեն Գաբրիելյանին** կկոչեինք **Գուրգեն Շնորհալի:**

Հիրավի, Գ. Գաբրիելյանն այդպես էլ կար: Տաղանդավոր մանկագիր- բանաստեղծ, երգահան - երգիչ, բանահավաք - լրագրող և, ինչու` չէ նաև նկարիչ:

Մանկավարժն ու մանկական գրողը համաչափ զուգորդված ու միաձույլ են Գաբրիելյանի մոտ: Այդ է վկայում նրա առաջին գիրքը` **«Ճուտիկներ» /1960/ ժողովածուն:** Հենց իր առաջին ժողովածուով նա լավ հայտ ներկայացրեց [1, էջ 27]:

Մանկագիրն ընթերցողների սպասելիքներն արդարացրեց իր **«Մեր գյուղի առավուրդ» /1961/, «Բարի լույս» /1964/, «Այբուբենը երգերի մեջ» /1967/, «Ես հո փոքրիկ չեմ» /1967/, «Կեսօր» /1968/, «Ծառերի կրկեսը» /1970/, «Ծաղիկն ու մեղուն» /1970/, «Անմեղ ժախտներ» /1973/, «Գույների երգը» /1973/ գրքերով:**

Գ. Գաբրիելյանի մանկական բանաստեղծություններին հատուկ են գրչով կատակելու և կատակով շատ բան ասելու ձիրքն ու կարողությունը:

Գ. Գաբրիելյանը դաստիարակիչ մանկագիր է: Այսպես` նրա **«Գույների երգը»** գրքի **«Ծաղիկների երգը», «Ծառերի երգը», «Կենդանիների երգը և «Մատիսների երգը»** շարքերում նա, ելնելով ժամանակակից երեխաների հետաքրքրություններից ու նրանց դաստիարակության խնդիրներից, ստեղծել է այնպիսի երգեր, որոնք աչքի են ընկնում ոչ միայն ծաղիկների, ծառերի ու կենդանիների բնորոշ հատկությունների դիպուկ բնութագրությամբ, այլև մարդկային հարաբերությունների ու բնավորությունների ընդգծմամբ: Օրինակ, նարզիգ ծաղիկն աչքի է ընկնում իր գեղեցկությամբ և անուշ հոտով, որին կարող են հետևել մանուկները.

Ես աշխարհ եմ  
գալիս  
Ձնծաղիկից  
հետո,  
Ձնծաղիկի  
կոթով,  
Մանուշակի  
գույնով,  
Բայց իմ անուշ  
հոտով [2, էջ 4]:

Ինչ վերաբերում է **«Մատիտների երգը»** շարքին, ապա նրանում Գաբրիելյանը դրել է իր բանաստեղծություններին խոր իմաստ ու երանգներ հաղորդող գույները, որոնք ընդգծում են բանաստեղծի խոսքի ճանաչողական արժեքը: Օրինակ՝ կարմիր մատիտը նման է ալ դրոշի, շիկնած այտի, արտում բուսած կակաչին ու մորիին **/«Կարմիր մատիտի երգը»/**:

Ես ձեր ջոկի  
Այ դրոշն եմ,  
Ու փողկապն եմ  
Բոլորիդ,  
Շիկնած այտ եմ,  
Նռան հատ եմ,  
Արտի կակաչ  
Ու մորի[2, էջ 43]:

Իսկ սպիտակ մատիտը աչքի է ընկնում իր ճերմակությամբ, ինչպես ամպը, ինչպես խիղճը: **/«Սպիտակ մատիտի երգը»/**:

Ամպ եմ ճերմակ  
Ձյունե վերմակ,  
Մարմարե քար,  
Շոռ ու շաքար:

Բամբակ եմ ես,  
Կաթ ու փրփուր.  
Ու խղճի պես  
Մաքո՛ւր, մաքո՛ւր [2, էջ 44]:

**«Անմեղ ժպիտներ»** և **«Գույների երգը»** գրքերը կրկին ապացուցեցին, որ Գ. Գաբրիելյանը հայ գրականության բեղմնավոր ու հմուտ մշակներից է, որի յուրաքանչյուր էլույթ կարող է ուրախացնել բազմահազար ընթերցողներին:

Մանկագրի կյանքում բախտորոշ նշանակություն ունեցավ **«Երգող ծառը»** ժողովածուն, որը 1983 թվականին արժանացավ Հայաստանի գրողների միության՝ Ստեփան Զորյանի անվան մրցանակի:

Ուշադրության արժանի է բանաստեղծի **«Տարին բոլոր՝ երգերով նոր» /1986/** գիրքը, որը եկավ կրկին ընդգծելու, որ Գաբրիելյանը չի բավարարում ձեռք բերածով:

Գիրքը բացվում է **«Չորս քույրերը»** ստեղծագործությամբ, **«Մեկը մեկից ճոխ ու նախշուն»** քույրերի դժվարին, բանաստեղծական բնութագրումները մենք տեսնում ենք **«Գարուն», «Ամառ», «Աշուն», «Ձմեռ»** բաժիններում:

**«Տարին բոլոր՝ երգերով նոր»** ժողովածուի քնարական հերոսը հիմնականում կրտսեր տարիքի դպրոցականն է: Գ. Գաբրիելյանը տարվա տարբեր եղանակները բնութագրելով կոլորիտային երանգներով, ամեն ինչ ծառայեցրել է մանուկների և պատանիների հոգեբանության

բացահայտմանը, նրանց բնավորության ձևավորմանը: Երեխան հպարտ է, որ իր հայրիկը հովիվ է.  
/«Մռով սարում»/

Մի վրան կա  
Մռով սարում,  
Ուր շնկշնկան  
Հովն է պարում:

Պապա չկա  
Մռով սարում,  
Ուր շնկշնկան  
Հովն է պարում:

Իմ պապիկն էր  
Այնտեղ հովիվ՝  
Ականջն ամռան  
Անուշ հովին:

Հայրս է հիմա  
Այնտեղ հովիվ՝  
Ականջն էլի  
Ամռան հովին [3, էջ 21]:

Գ. Գաբրիելյանը երեխաներին հասկացնում է, որ փոքրերը ևս կարող են կատարել մեծ գործեր  
/«Մրջունի գործը»/:

Ամռան մի օր  
Ժիր մրջունը  
Ծոմեղով  
Ձեռ ու ոտ,  
Ճամփամիջով  
Քարշ էր տալիս  
Ձողիկի չափ  
Մի ծղոտ:

-Տատի՛ - ճչաց  
Փոքրիկ տղան,-  
Այս մրջունին  
Հապա տե՛ս.  
Ինքը պստիկ՝  
Ոնց է քաշում  
Հսկա բեռը  
Մարդու պես:

-Այդպես էլ է  
Լինում տղաս,-  
Ասաց նրան  
Տատը ծեր,-  
Երբ փոքրերը  
Պստիկ տեղով  
Կատարում են  
Մեծ գործեր [3, էջ 24]:

1987թ. լույս տեսավ Գ. Գաբրիելյանի սովորաձևավալ ժողովածուն՝ «Աղավնատուն» խորագրով: Ընթերցողներն այն համարեցին անակնկալ և համոզվեցին, որ մանկագիրը, առնչվելով ժամանակակից պոեզիայի միտումներին, սերտորեն կապվել է կյանքի հրատապ երևույթներին, գննել դրանք և ներկայացրել բանաստեղծական յուրօրինակ երանգներով: «Ղարաբաղ» բանաստեղծության մեջ նա նկարագրում է իր անսահման սերը մայր հողի՝ Ղարաբաղի հանդեպ: Բանաստեղծի համար Ղարաբաղը մոր պես թանկ է.

Այդ ինչ հևք ու հնար ունես,  
Այդ ինչ երգ ու քնար ունես,  
Որ քեզ մի օր տեսնողն ասես  
Քոնն է դառնում քո որդու պես:  
Կարոտում է քո Քիրս սարին,  
Քո Թարթառին, Գանձասարին...  
Դու երգ ու տաղ, դու բերք ու բաղ,  
Դու մոր պես թանկ մեր Ղարաբաղ:

1988-2005 թվականներին զարմանալի բեղմնավոր էր Գ. Գաբրիելյանի գրիչը: Այդ ընթացքում նա հրատարակել է 13 անուն գիրք: Դրանք են՝ «Աստղաշենի աստղերը», «Կապույտ երակ», «Իմ շնիկը», «Արցախյան խոհանոց», «Իմ առածանին», «Աշնան հանդես», «Ուրախ հայերեն», «Նախանշաններ», «Աստծո տունը», «Արևը լճակում», «Մեղունների հրաշք աշխարհ», «Արցախյան նվագարան», «Մեր թևավոր բարեկամները», Հերտտած տապ:

Տեսիլային երևույթները միշտ էլ ուղեկցել են մեր գրականությանն ու արվեստին: Շատ մեծ ու հիշարժան գործեր են ծնվել Արարիչ Տիրոջ հետ զարմանահրաշ «հանդիպման» միջոցով: Այսպես է ստեղծվել մեր մեկրոպայան այբուբենը, Թումանյանի շատ գործեր... Հնարավոր չէ բոլորը թվել:

Աստծո հետ նման մի տեսիլային «հանդիպումից» է ծնվել Գուրգեն Գաբրիելյանի «Աստծո տունը» սրբապոեմը, որի մեջ անշուշտ, խոսում է Աստծո, Մարդու, Հավերժության անմահ Ոգին:

Գ. Գաբրիելյանը «Կապույտ երակ» ժողովածուի «Քիրս» բանաստեղծության մեջ հպարտությամբ պատմում է հերոսների մասին, նկարագրում Քիրս սարը՝ որի կատարը նման է հեքիաթ - աքլորի հսկա կատարին.

Այնքան նման է  
Քիրսի կատարը  
Հեքիաթ - աքլորի  
Հսկա կատարին...  
Որ թվում է, թե  
Քիրսը աքլոր է՝  
Նստած մայր հողի  
Ժայռեղեն թառին:  
Եվ կանչե պիտի  
Աքլորականչին,  
Որ քնով չանցնեն

Արծվաճուտ որդիք...  
Որ արթուն նման  
Սրբազան կանչին՝  
Հանուն լեռնածին  
Իր ժողովրդի:

Եվ «քնով չանցան արծվաճուտ որդիք» նրանք սրբացան՝ ազատագրելով մայր հողը: Գրողը նորօրյա հերոսներին համեմատում է հայ քաջարի հայդուկների հետ.

Ամեն մեկդ մի նոր Գևորգ Չաուշ,  
Մի Աղբյուր Մերոբ, մի քաջ Անդրանիկ,  
Պայքարի ելաք՝ առած սուրբ դրոշ,  
Որ ազատ ապրեն ազգ ու հայրենիք:  
Հանուն քաջ որդու ու Մոր միության,  
Հանուն Արցախի ու ողջ հայության,

Բարձր պահեցեք ոգին ձեր արի,  
Օ՛, ֆիդայիներ Արցախ աշխարհի:

Արցախյան շարժման հենց առաջին օրերից բանաստեղծ Գ. Գաբրիելյանը հյուսեց հայրենասիրական իր ոգեշունչ երգերը: Գաբրիելյանի պոեզիան ամբողջությամբ ներծծված է հայրենասիրությամբ: Ինչպես ինքը՝ հեղինակն էր վկայում, նրա պոեզիայից իրոք հայրենիքի սերն է ծործորում: Գաբրիելյանը հպարտությամբ էր ապրում իր երկրամասում, որն անթիվ հերոսներ է ծնել: Մարդիկ, որոնք պապերից ժառանգելով լեռնցու լավագույն գծերը, այսօր էլ ամուր են պահում արցախյան հայաշունչ ոգին:

Ես ապրում եմ Ղարաբաղում...  
Եվ չեմ ապրի մեկ այլ հողում,  
Եվ կմեռնեմ պապերիս պես՝  
Արցախացած նրա կողում:

Արցախը հարուստ է հնամենի ավանդույթներով ու զվարճախոսություններով, թևավոր խոսքերով, երգերով ու խաղիկներով, գրույցներով, սրախոսություններով: Մակայն այդ բոլորը սակավ է գրի առնված, պետք է կորստից փրկել ամեն մի նմուշ, իսկ դրանք, փրկելով կորստյան վտանգից, կդառնան սերունդների սեփականությունը: Միանգամայն նորություն են Գաբրիելյանի **«Իմ առածանի»**, **«Արցախյան խոհանոց»** բանաստեղծաշարքերը:

**«Իմ առածանին»** բանաստեղծաշարքում գետեղված գործերն ունեն բարոյախրատական ուղղվածություն: Դրանք ժողովրդական ասացվածքների ու իմաստախոսությունների յուրահատուկ մշակումներ են:

**«Արցախյան խոհանոց»** բանաստեղծաշարքը նույնպես կարևոր նպատակ է հետապնդում՝ մոռացությունից փրկել մեր ազգային-ավանդական ճաշատեսակները: Բանաստեղծը փոշիների տակից վեր է հանում մեր տատիկների արցախյան շուրջ 20 կերակրատեսակներ: Բանաստեղծը ընթերցողին ծանոթացնում է Արցախի բնության հրաշքներին, սննդարար օգտակար բույսերին, սովորեցնում պատրաստել արցախյան այս կամ այն կերակուրները՝ կորկոտ, խընջըլոգ, մոշով լոբի, թերթերուկ,

Ժենգյալով հաց, թանով ձներեկ և այլն [4, էջ 20]:

Քաղեմ, հնդրեմ, փնջեմ, կտրեմ,  
Տատիս ճանաչ մի խուրձ կանաչ.-  
Կնձմնձուկ ու թրթունջուկ,  
Սպանաղ, սինձ, սամիթ ու գինձ,  
Առոք-փառոք սոխ-ճոճոռուկ,  
Պտտկուն, պուտ, պառավապորտ:  
Ձեթը շաղեմ, շաղախեմ,  
Խմոր հունցեմ, գնդեր թրծեմ,  
Գնդերն հարթեմ, կանաչ լցնեմ,  
Տեփեմ,  
Ծեփեմ,  
Բովին  
Եփեմ...  
Դառնա թխած,  
Շահած-պահած  
Ժենգյալով հաց[5, էջ3]:

Մեծ է բանաստեղծի ծառայությունը Ղարաբաղյան ժողովրդական երգերի ու խաղիկների մշակման ու տարածման գործում: Հիշենք թեկուզ և **«Ղարաբաղի հորովելը»**: **«Ղարաբաղի հորովելում»** հայ մարդը իր տառապանքները խեղդում է արևատենչ հորովելի ելևեջներում՝ ոչ մի

վայրկյան չկորցնելով հույսը լուսավոր վաղվա, ճշմարտության ու արդարության հաղթանակի հանդեպ:

Հայտնի են նաև Գ. Գաբրիելյանի արցախցու կյանքի ու կենցաղի ավանդական կողմերը պատկերող **«Խնեցուն երգը», «Ըրկանքեն երգը», «Կալին երգը», «Ըխայրին ախճիցը» «Հընգերը»** և այլ երգեր: Այդ ստեղծագործությունները դուրս են գալիս բանաստեղծական շրջանակներից, ստանում ազգագրական մեծ նշանակություն:

Ըստ Գաբրիելյանի ստեղծագործությունների՝ իլիկ կամ ճախարակ մանող կնոջը միայն կարելի է պատկերացնել դարաբաղյան արխալուղով, որի գրպաններում նանին միշտ պահում էր չիր ու չամիչ թոռների ու ծոռների համար: Եվ ահա, կարծես, աչքի առաջ է դարաբաղյան տարագով կինը, որն իր ընտանիքի կարիքը հոգալու համար երկանքի մոտ չոքած երգում է.

Աղե արկանք,  
Մաղե արկանք,  
Քըզանում կա  
Էլա հարզանք:

Դա հարզանքի տուրք է նաև երկանքի նկատմամբ, որի միջոցով դարաբաղցին հոգացել է իր օրվա ապրուստը: Աշխատավոր դարաբաղցու սոցիալական վիճակն է արտահայտում **«Հորովելը»**: Այն ջերմ է իր դարաբաղյան ինքնա-տիպությանը, զուտ հայկական համով ու հոտով, պատմությամբ ու բովանդակությամբ, վշտով ու հույսով:

Այդ երգի մի խաղիկում լրիվությամբ արտահայտվում է դարաբաղցու ապրելակերպը.

Իրիքնյակը տյուս ա յեկալ,  
Տանըս յըրա լյուս ա եկալ,  
Սօր մին կորե վեր վար անինքը,  
Գյիդա՝ սըրտես հույս ա եկալ:

**«Դարդը սրտեն տենակ»** դարձած հողի մշակը չի հուսալքվում իր հարստահարված վիճակից և հավատում է, որ **«նեղ օրեն լեն օր կկյա»**, հողին հանձնած հատիկը հասկ կդառնա և սրտի սովոր լորը կգա, կերգի գալիք հացի գովքը:

Հըռնե ապան մինակ ա իլալ,  
Դարդը սըրտեն տանակ ա իլալ,  
Էտ հու՞նց բյուրդան բոյ քըշեցեր,  
Դարդը սըրտաս տեն քըշեցեր:

**«Կալին երգը»** ստեղծագործության մեջ Գուրգեն Գաբրիելյանը կենդանություն է տալիս վաղուց վերացված պատկերներին ու դրանք դարձնում գրականության հարուստ նյութ.

Կալին խոտը հարալ ըմ,  
Կամնը թագա քարալ ըմ,  
Հանդին միկա խորն ա ըլալ,  
Սօր շիլակավ տարալ ըմ:

Սակայն ինչքան էլ դժբախտ գյուղացին ամբողջ տարին չարչարվի, նույնիսկ խուրճը շալակով կալ հասցնի, որ կալսի և իր ընտանիքը պահի, միննույն է, ստացված բերքը լրիվությամբ իրեն չի մնում, պետք է բաժան-բաժան անի և տակը մնացած աննշան բաժինով երեխաներին պահի.

Դանին կեսը քյուխենն ա,  
Կեսը խարջին- ծուխենն ա,  
Տակին թա վեր պեն մընա,  
Էն էլ իմ խեղճ խուխենն ա:

Գ. Գաբրիելյանը «**Խընեցուն երգը**» ստեղծագործության մեջ ժողովրդի լեզվով երգում է նախախորհրդային մարդու ողբերգությունը՝ մասնացույց անելով հարստահարիչների անազնվությունն ու թալանչիական կիրքը:

Մեր ապրուստը մին կով ա,  
Մին էլ տեսեր՝ կյուղացեն  
Ըրտասուքը մին ծով ա  
Դե հու՞նց ապրե գյուղացեն:

Անվանի մանկագիրը նույնիսկ ժողովրդական ստեղծագործության մշակման ժամանակ հարազատ է մնացել երեխայի հոգեբանության մեջ ազնիվը և բարին ընդգծելու իր մանկավարժական հոգեբանությանը.

Պուժկես տակեն վերչին փուշին  
Եկավ տարավ Դերանց Նուշին,  
Էն մին հափուտ կորեկըն էլ  
Բալաս տվավ ծտեն, դուշին:

Ապրուստի հույս մի բուռ կորեկը հողվորի երեխան բաժանում է ծտերին, որովհետև «հավքերն էլ մարդիկ են»:

Ներկայիս սերունդը դժվար կապակերացնի, թե ինչպիսին են եղել մեր նախնիների նիստն ու կացը:

Գուրգեն Գաբրիելյանի այդ ստեղծագործությունները կնպաստեն, որպեսզի մոռացության չտրվեն, մեր ավանդական խնոցին, կալը, արորն ու գույթանը, երկանքը: Ընթերցողը, առնչվելով բանահյուսության գանձերին, կհարստացնի ոչ միայն իր գիտելիքները, այլև ձեռք կբերի ստեղծագործությունը գիտականորեն ընկալելու կարողություն, և նրա մեջ սեր կառաջանա դեպի իր ժողովրդի հոգևոր արժեքները: Ժողովրդական բանահյուսությունը դարաբաղում հոգևոր մշակույթի բաղկացուցիչ մասերից մեկն է:

Գ. Գաբրիելյանի պրպտումները մշտնջենական էին, արարելու պահանջն՝ անհագուրդ:

2005 թ. նոյեմբերի 15-ին իր մահկանացուն կնքեց հոչակավոր գործիչ Գուրգեն Գաբրիելյանը: Սակայն նա հեռացավ ֆիզիկապես... Նրա արարող ոգին ճախրում է հոգևոր Արցախի երկնակամարում, երգի փոխված՝ թնաբախում է ամենուր:

2007 թ. հետմահու ԼՂՀ կառավարության հովանավորությամբ՝ **բանաստեղծի ծննդյան 80-ամյակի առթիվ** հրատարակվեց «**Ընտրանի**» գիրքը:

Գ. Գաբրիելյանի «**Ընտրանին**» հրաշալի գործերի մի նոր ծաղկեփունջ է՝ բուրումնավետ, անթառամ: Նրա գրական ժառանգությունն այնքան մեծ է, բարձրարվեստ, որ հնարավոր չէ անգամ ամենաձավալուն ընտրանու մեջ զետեղել բոլոր լավագույն գործերը: Գ. Գաբրիելյանի ստեղծագործության հանդեպ եղած հետաքրքրությունը երբևէ չի սպառվելու, գալիքում հրատարակվելու են ոչ միայն ընտրանիներ, այլև նրա բազմերանգ, անսպառ գանձարանի ակադեմիական հատորները:

2008 թ. հետմահու անվանի մանկագիր Գուրգեն Գաբրիելյանի ծննդյան 80-ամյակի առթիվ, Ստեփանակերտի ԼՂՀ ԳՍ «**Վաչագան Բարեպաշտ**» հրատարակչությունում տպագրվեց «**Գուրգեն Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում**» գիրքը: Այս գիրքը Գուրգեն Գաբրիելյանի դիմանկարն ամբողջացնելու մի փորձ է:

2012թ. Գուրգեն Գաբրիելյանի 85-ամյակի կապակցությամբ հրատարակվում է «**Ես ձեզ հետ եմ**» ժողովածուն: Այնտեղ ամփոփված են ականավոր մանկագրի՝ տարբեր տարիների հրատարակած, վաղուց արդեն մանուկ ընթերցողների սիրուն և ուշադրությանն արժանացած գործերը: Մեծագույն մտածողներից մեկն ասել է. «Մինչև հիմա մարդկության կողմից արարված բոլոր արժեքների մեջ ամենասրբազանը մանուկների համար ստեղծվածն է»: **Գաբր Սպոր** այս ընտրանին՝ «**Ես ձեզ հետ եմ**», նույնպես դրա առեկատայան է: Թե՛ մանկագրին ու թե՛ երգահանին իր մեջ միավորում է Գուրգեն Գաբրիելյանը, նա ներծծված է հավերժության ընթացքի մեջ և միշտ ներկա է՝ գրական իր անվիճելի վեհությամբ [6, էջ 4]:

Գ. Գաբրիելյանի մեջ ամբարված էին մեր ժողովրդական երգն ու տաղը, երաժշտությունը, հումորը, արարելու անսպառ կարողությունը:

Տաղանդավոր մանկագիր, հրապարակախոս, ժողովրդական երգահան, արցախյան շարժման նվիրյալ Գուրգեն Գաբրիելյանը դեռ շարունակելու է սրտեր ջերմացնել, ոգի և շունչ հաղորդել սերունդներին, քանզի իր բարձրարժեք գործերով, հանճարեղ «**Ղարաբաղի հորովելով**» գնում է դեպի դարերի խորքը՝ հավերժ մնալով հայ գրականության ու մշակույթի պատմության մեջ:

Գուրգեն Գաբրիելյանն իր հարուստ գրական ժառանգությամբ հավերժորեն մտել է ժամանակների հոլովույթի մեջ:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խանյան Ս., Գուրգեն Գաբրիելյանի աշխարհը, Եր., 1997:
2. Գաբրիելյան Գ., Գույների երգը: Բանաստեղծություններ, պոեմներ. Բաքու, 1973:
3. Գաբրիելյան Գ., Տարին բոլոր՝ երգերով նոր, Եր., 1986:
4. Գրիգորյան Լ, Արցախի աշխարհի օրհներգիչը, Ստեփ., 1998:
5. Գաբրիելյան Գ., Արցախյան խոհանոց, Եր., 1998:
6. Գաբրիելյան Գ., Ես ձեզ հետ եմ, Ստեփ., 2012:

#### РЕЗЮМЕ

**Гурген Габриелян – детский писатель-фольклорист  
Карине Гулян**

**Ключевые слова:** Габриелян-детский писатель, детская литература, фольклорист, журналист, педагог-психолог, карабахские мотивы, сочинитель песен, пейзаж, арцахская борьба за существование, свобода, победа.

Гурген Габриелян – один из лучших представителей современной армянской детской поэтической культуры. Являясь педагогом-психологом, он говорил с детьми на их же языке доброты и простоты. Зная внутренний мир ребенка, писатель выработал свой особенный стиль.

Гурген Габриелян к тому же был певцом-фольклористом и в литературном мире являлся феноменом, в связи с этим, армянская детская литература без его творчества была бы не полна. Писатель занимался не только литературой, но и политической деятельностью и в годы Арцахского движения проявил себя патриотом своей родины.

#### SUMMARY

**Gurgen Gabrielyan – Children's Writer-Folklorist  
Karine Gulyan**

**Keywords:** Gabrielyan, children's writer, children's literature, folklorist, journalist, teacher, Karabakh motives, songwriter, landscape, Artsakh struggle for existence, freedom, victory.

Gurgen Gabrielyan is one of the representatives of modern Armenian poetry for children. He was first of all a psychologist. He could speak with children in their language full of simplicity and kindness. Being a teacher and a psychologist Gabrielyan could easily understand the inner world of children and find his own style in traditional themes. Gurgen Gabrielyan was also a singer-folklorist. Armenian poetry for children would be incomplete without him. He was not only a writer and a composer but also a politician, and during the Artsakh liberation movement he was always on the first line. G. Gabrielyan was a kind, honest, wise patriot of his country.